

**Տ. ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(8 մայիսի 2005 թ.)

Միրելի հավաքացյալներ,

Այսօր մենք ամենքս հավաքվել ենք սրբարար այս աղոթավայրում միասնաբար աղոթելու և հաղորդվելու, ողջունելու և փառաբանելու մեր Փրկչին և Նրա թագավորությունը՝ «Օվսաննա, օրհնյալ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով» (Նովի. ԺԲ 13) ավերաբանական հանգերգով: Այսպես փակավիճակ երկու հազարամյակ առաջ Նրեպարանի ժողովուրդը ողջունել էր Նրան Իր՝ Երուսաղեմ հաղթական մուտքի ժամանակ:

Այսօր մենք՝ քրիստոնյաներս, միախմբվել ենք մեր հոգևոր ու ազգային սրբավայրում ապրելու և մեր կյանքում ապրեցնելու այս անգամ արդեն Երկրորդ Ծաղկազարդի խորհուրդը, փոքր, որ ներհափույթ է միայն մեր ազգին ու մեր Եկեղեցուն: Քիչ առաջ ընթերցված Ավերաբանը և օրվա շարականն ամբողջապես վերհանում և ներկայացնում են փոքր ողջ իմաստ ու բովանդակությունը: Եթե Առաջին Ծաղկազարդը Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի իրողությունն է, ապա Երկրորդ Ծաղկազարդն արձագանքն է Վերին Երուսաղեմ՝ Երկինք Քրիստոսի հաղթական մուտքին վերաբերվող հեքույալ ազգային գողտրիկ ավանդության, համաձայն որի մեր հավաքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապի բանարևութային ողջ ընթացքում վայելել է հրեշտակի այցելությունն ու ներկայությունը: Նրեշտակը ոչ միայն գոտեպնդում էր նրան, այլև բանտի սարսափելի ու խավարչարին մթնոլորտը վերածում իրական երկնքի: Պատահում է, սակայն, որ Նամբարձման չորրորդ օրը հրեշտակը բացակայում է, և երբ Լուսավորիչը հաջորդ օրը հարցնում է պարճառը, հրեշտակը բացապրում է, որ ամեն փարի Քրիստոսի՝ երկինք հաղթական վերադարձը փառաբանելու համար ինն օրեր շարունակ փոռախմբություն է արվում հրեշտակների ինը դասերի կողմից, և քանի որ ինքը հրեշտակների չորրորդ դասից է, ուստի պարտավոր էր այդ օրն իր դասակիցների հետ մասնակցելու Նիսուսի՝ երկինք համբառնալու փոռակապարտությանը:

Ե՛վ Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, և՛ հաղթական վերադարձը երկինք լավագույնս վկայում են այն ճշմարտությունը, որ Քրիստոս Տերն է թե՛ երկրի և թե՛ երկնքի, թե՛ երկրավորների և թե՛ երկնավորների, որ Նրա թագավորությունը փարածվում է բովանդակ փինզերքում, որ Նրա արարչագործությունը միասնական ամբողջություն է՝ աստվածային խնամքի ու շնորհի ներքո:

Այս գեղեցիկ ավանդությունը վավերացումն է մեր ժողովրդի հոգեկան այն խորն ապրումների ու համոզման, որ ինքն իր պատմության ծանրագույն և խաղաղ ողջ ընթացքին երբեք միայնակ չի եղել: Լուսավորչի կյանքը մանրակերպն է մեր ժողովրդի կյանքի: Մարդկային մտածողությամբ ոչ ոք այնքան անհուսալի պայմաններում չի գրնվել, որքան Լուսավորիչը Խոր Վիրապի՝ օձերով ու կարիճներով լի բանտաբանում, ոչ ոք այնքան փխրամած ու լքված չի եղել, որքան Լուսավորիչը Խոր Վիրապի մենության ու մթության մեջ: Ոչ մի ժողո-

վուրդ իր պարմական փորձառության մեջ այնպիսի օրհասական պահեր չի ապրել, ինչպիսիս մեր ժողովուրդն իր պարմության գրեթե բոլոր ժամանակներում շրջապարված խայթելու և մահացու հարված հասցնելու թշնամությամբ: Ոչ մի ժողովուրդ այնքան մտայն ու դժնդակ ապրումներ ու փառապանքներ չի զգացել, որքան մեր ժողովուրդն անօգնական միայնության մեջ: Մակայն, փառք Աստուծո, խորվիրապայան մթամսած գուրը հանկարծ ողողվում է լույսերով, և մեր հավաքի հայրն զգում է, որ միայնակ չէ, որ աստվածային ներկայությունը սրբապանդում և հուսադրում է իրեն:

Որքան ուսանելի է այս սբանչելի ավանդությունն ու խորհուրդը մեզ՝ 21-րդ դարի ապրողներին համար, որ հաճախադեպ անելանելի կացության մեջ ենք հայտնվում: Որքան թելադրական է այն հարկապես այժմ, երբ միայնությունը, մենակ լինելու զգացումը ժամանակակից մարդու գլխավոր հիվանդությունն է դարձել: Մեր իսկ կամքով Աստուծոն բացակա ենք դարձնում մեր կյանքից, մեր շուրջը գոյացնում ենք դատարկություն և ընթանում ենք ոչնչացմանի ու անէացմանի ուղիով: Ներկանքը բացողը է՝ անձնասպանություններ, այլասերվածություն, թմբիր ու անարարբերություն մարդկային ճակարագրերի նկարմամբ, բարոյական ու ֆիզիկական մահեր: Նավաբքը և այդ հավաքից բխող աստվածային անբացաբերի ներկայությունն է միայն միջոցը դժվարությունները հաղթահարելու և կյանքի գորդյան հանգույցները լուծելու: Տխուս ինքն է հավաստում. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե հավաք ունենաք և չերկմրեք», լեռներ րեղավոխելու չափ անկարելի համարվող գործերը ձեզ համար կարելի կդառնան (տես Մատթ. ԻԱ 21):

Նավաբքը, իրական ու հավիտենական Աստուծո հավաքը, հրեշտակների, անդենական աշխարհի գոյության հավաքը միմիայն կարող են փրկել մարդուն իր միայնությունից, ինչպես որ փրկեց Լուսավորչին Խոր Վիրապի առանձնության մեջ: Եթե Լուսավորչին իր հավաքով վիրապի բանբը վերածեց լուսավոր մի վայրի, ապա մենք մեր լուսավոր շրջապարը, մեր լուսավոր միջավայրը շար հաճախ վերածում ենք բանտի՝ կտրելով մեզ աստվածային հաղորդակցությունից:

Ներկայես, սիրելի՛ հավաքացյալներ, այս րոնի առանցքային խորհուրդը՝ խարսխված քրիստոնեական ճշմարտության և այդ ճշմարտությունը կենսավորած Լուսավորչի կյանքի վրա՝ հավաքն է, հավաքը մեր Արարչի ու մեր Փրկչի հանդեպ, հավաքը, առանց որի չենք կարող ամբողջացնել մեր մարդկային կյանքը, մեր մարդկային կոչումն ու առաքելությունը: Նավաքն է միակ ճանապարհը մեր և Աստուծո, արարածների և Արարչի հաղորդակցության: Նավաքը, առանց որի կունենանք սոսկ ֆիզիկական գոյություն, որպիսին կենդանական ու բուսական կյանքն է: Իսկ հոգին, իսկ մեր Աստուծո պարկեր լինելը: «Նոզին է կենդանարար» (Նովի. Զ 64),- հաստատում է Տխուս, հոգու կենդանի լինելու և կենդանացնելու աղբյուրն Աստված է, ճանապարհը՝ հավաքով Աստուծո հետ հաղորդակցվելը: Այլապես ոչնչով չենք փարբերվի այն ծառից, որը չորանում է ջրի ու օրգանական աղերի բացակայությունից:

Սիրելիներ, իրապես սա չէ մեր կոչումը: Աստված մեզ արարել է մարմնով և հոգով, մարմնական ու հոգևոր կարողություններով: Մենք պարզապես իրավունք չունենք մեր կյանքը միայն մարմնական, ֆիզիկական ու նյութական միակողմանիությամբ ապրելու, այլապես լիարժեք մարդ չենք կարող համարվել: Պարահական չէ, որ մեր աղոթքներից մե-

կում մարդ չի համարվում նա, ով չի հավատում Նորը, Որդուն և Ս. Նոգուն: Պատահական չէ, որ միությունավոր կերպով իր հավաքը խեղդող մեկը երբ մտքենում է եկեղեցական հայրերից մեկին՝ ասելով. «Յույց Կուր ինձ քո Աստուծուն», վերջինս պատասխանում է. «Յույց Կուր ինձ քո մարդկությունը, և ես ցույց կդնեմ քեզ իմ Աստուծուն»:

Ինչպես որ կույր աչքերով չենք տեսնի արեգակի լույսը, այնպես էլ հոգու բթացած զգացողությամբ չենք զգա աստվածային ներկայությունը: Ինչպես որ փշրած հայելու մեջ չենք տեսնի մեր պատկերը, այնպես էլ մեղքերով շաղախված հոգով չենք տեսնի աստվածային լույսը: Աստվածային ներկայությունը պալատներ ու դղյակներ, մարդկային փառք ու ազդեցություն չի ճանաչում: Աստվածային ներկայությունը փարածվում է այնտեղ, որտեղ առկա է հավաքք ու սեր, մաքրություն ու սրբություն: Օրինակը՝ մանուկ Զրիստոսի անշուք մտորն է, օրինակը՝ Լուսավորչի սարափազողու բանտագորն է:

Նույն, սիրելի հավատացյալներ, Երկրորդ Ծաղկագարդի այս փունջը հրաշալի առիթ է մեզ համար՝ վերանորոգելու մեր ուխտը մեր Արարչի հետ, ամրապնդելու մեր հավաքը և, վերջապես, վերահաստատելու մեր մարդ, Աստուծո զավակ լինելու բարձր կոչումն ու առաքելությունը:

Ինձ համար անձնապես այս օրը Տիրոջ հետ ուխտս վերանորոգելու կրկնակի առիթ է: Այսօր իմ անդրանիկ Պատարագն եմ մատուցում սուրբ և սրբաբար այս փաճարում: Մեր որդիական անկեղծ խոնարհությունն ու ջերմագին նվիրումն ենք հայտնում մեր սիրեցյալ Նայրապետին, որ հայրական օրհնությամբ ու հայրապետական փնտրությամբ մեզ ձեռնադրության ու օժան շնորհին արժանացրեց: Նվիրական այս սրբավայրից աղոթում ենք Նայոց Նայրապետի կենաց արևշարության համար և բարեմաղթում, որ Տերը գորավոր պահի Նայոց Նովվապետի ծաղկյալ գավազանը:

Երախտագիտությունս հոգևոր ծնողիս՝ Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին: Աղոթքս է, որ Տերը Սրբազան Նորն անասան պահի և աստվածային շնորհները բազմացնի՝ նորանոր ձեռնադրություններով ծավալելու:

Միքելի հավատացյալներ, այսօր նաև հիշատակության օրն է մեր երախտաշար Նայրապետներից Գևորգ Ե Վշրալի Կաթողիկոսի մահվան 75-րդ տարելիցի: Իրոք բնութագրական է նրան Կրկնական «Վշրալի Նայրապետ» բնորոշումը, քանի որ ապրեց ու իր ժողովրդին հովվեց այնպիսի դժնդակ ժամանակներում, երբ մեր ժողովրդի գլխին դամոկլյան սրի պես կախված էր հայրենի երկրում լինել-չլինելու օրհասական խնդիրը: Առաջին Աշխարհամարտ, Նայոց Մեծ եղեռն, հայրենիքում գաղթականության սրվար բազմություն սովի ու հիվանդությունների ճիրաններում, Մարդարապարի և Բաշ-Ապարանի հերոսամարտեր, Նայաստանի Առաջին Նանրապետություն՝ սոցիալ-փնտրության, քաղաքական, մշակութային ծանրագույն իրողությամբ, բոլշևիկյան հասարակարգ՝ աստվածամերժության ու հավատարացության նկարագրով: Եվ այս ամենի համապարկերում Նայոց Նայրապետ, որ տրեմեց, պայթարեց՝ մեկ վայրկյան իսկ ջրելով իր ժողովրդին: Ի Տեր հանգցեց 1930 թ. այս օրը՝ սրբում անթեղած իր ժողովրդի փառասանները և նրա վերհասնումի հույսը: Բյուր խունկ և օրհնություն Վշրալի Նայրապետի հիշատակին: Այլևս վերածնված է ժողովուրդը, վերականգնված՝ հայրենի երկիրը, պայծառացյալ՝ Առաքելական Եկեղեցիդ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն»: